

ՄԵՆՔ ԴԵՌ ԴԱՐԱՍԿՁԲԻՆ ԵՆՔ

Քաղաքական միտքը մեծավ մասամբ հազվագյուտ սթափ անձերից զատ կամ թերևս շատերից, որոնք, այնուամենայնիվ, իրենց չեն բացահայտում, ահա այդ հազվագյուտ անձերից զատ, դեռևս Սասունի լեռներից չի իջել: Որակումն իմը չէ: Դրսից ժամանակին, պատմությանը, մեր իրականությանը քննադատաբար նայողներից մեկի արտահայտությունն է: Ճշգրիտ արտահայտությունը: Ես նույնությամբ որդեգրում եմ: Սասունի լեռներից չենք իջել: Հուզական կտրվածքով գրեթե ոչ մեկս չի իջել Սասունի լեռներից:

Դարասկզբին կրած ծանր պարտությունն այնքան ճակատագրական է եղել մեզ համար, որ թվում է, թե ազգի հարցերը արդեն վճռվել են այն ժամանակ: Չենք կարող հաշվի չնստել այն իրողության հետ, որ, այնուամենայնիվ, վերածնունդ ունեցանք, առաջացավ Հայաստանի Հանրապետությունը՝ երեք հանրապետությունները կարելի է համարել մեկ հանրապետություն: Եթե կուզեք, ես կհավելեմ նաև վաղանցուկ Երևանյան մարզը 1820-1837 թթ., որ հետո վերանվանվեց, որովհետև առաջացան այլ մարզեր ևս: Այս ամբողջ պատմությունը ես մեկ ամբողջության մեջ եմ տեսնում, երբ ազգը առ ի չգոյ է առաջացավ: Մշակութային, քաղաքական գիգանտներ ունեցավ, արծարծեց իր հիշողությունը: Այս ամբողջն անցյալ է: Եթե կուզեք իմանալ՝ 1828 թվականից հետո՝ վերջին երկու դարերում նորից ծնվեցին Խորենացին էլ, Նարեկացին էլ, մեր հիշողությունն էլ, մեր պատմությունն էլ: Գուցե՞ մենք էլ: Մեր հիշողությունը և մեր ապագան: Այսինքն՝ Օր ունեցանք: Պահ: Ժամ: Իսկ երբ այս ժամին դու կաս, նշանակում է ունես և անցյալ, և ապագա: Քոնով է վճռվում: Մեր մշակույթի ոսկեդարը մենք ունեցանք այս 200 տարվա ընթացքում՝ Աբովյանից ի վեր, արևմտահայ մտավորականներով, պատմաբաններով, հրապարակագրությամբ, գրականությամբ, պոեզիայով՝ ներառյալ Րաֆֆի, Թումանյան, Իսահակյան, Տերյան, Չարենց, Ա. Մյասնիկյան, Ա. Երզնկյան, Ա. Խանջյան, Ա. Քոչինյան, Գ. Հարությունյան, Յ. Ջարոբյան՝ մարդկանց խումբ, որ հանրապետություն կարողացան առաջացնել: Եվ երախտագիտությամբ եմ հիշում նրանց, որովհետև նաև նրանց սերունդն եմ: Ես ներքևի մարդու իմ վերաբերմունքն ունեի առ իշխանություն, քամահրոտ վերաբերմունքը: Եթե գրող ես, պիտի ընդդիմադիր լինես: Եվ ահա իմ ավագ գրչեղբայր Վահագն Դավթյանը ինձ գեղեցիկ դաս տվեց: Կոսիգինը Մոսկվայում Անտոն

Քոչիմյանին ասել էր. «Ես ծափ գարկեցի՝ ուխ, դե տես»: Վ. Դավթյանը խեթեց՝ քո պետությունն է, ուրիշները քոնին դիտողություն են անում: Ահա այդ պահից սկսած ես օտարի՝ բարեկամ թե թշնամի, իմ ղեկավարի փոխարեն նրանց առջև քրտնում եմ, կարմրում եմ, վատ եմ զգում, և դա զգում եմ որպես իմ քայլն անող մարդիկ, որ իմ փոխարեն կանգնած են ծանր վիճակի առաջ:

Ինչքանով է ճշմարիտ, ինչքանով չէ ճշմարիտ, որ մենք մնացել ենք դարասկզբում, մարդկության հետ չենք քայլել, մեր վերքը չենք սպիացրել, և մարդկության հետ համաքայլ չենք գնացել. մնացել ենք անցյալի մեջ, դա ճշմարտության մեծ քանակ ունի: Մեր ոտքը ծանր է եղել անցյալի բեռով, մեր ոտքից կախված է եղել անցյալի բեռը: Չխոսելով այն մասին, որ մեր տարածքն այնքան հզոր չէ, որ իր բոլոր որդիներին կարողանա պահել, զբաղեցնել, արտագաղթ չտալ երեկվա օրով խոպան, այսօրվա օրով՝ դեպի Ամերիկա, Ռուսաստան: Աշխատանք չփնտրելու, ընտանիքը բարեկեցիկ պահելու կենսատարածք չունենք: Իսկ այն, որ իսկապես հոգեբանությամբ մնացել ենք դարասկզբին, այնուամենայնիվ մնացել ենք վրեժի ժողովուրդ և նոր փորձանքներին անգետ, որովհետև մեր հայացքը շրջված է դեպի անցյալ, ճշմարտություն է: Այստեղ իմ կուռքերը պիտի դառնան ինձնից կրտսեր, առանց ազգային բարդությունների աճած գորեղները, որ վտանգը մտքը շրջանցել են, ժամանակին նայել են ժամանակի մարդու հայացքով: Կգա նոր սերունդը, իմ առաջնորդությունը ես նրանց եմ տալիս: Իմ հույսը նրանց հետ է: Ի՞նչ երաշխիքներով ենք 21-րդ դարում հայտնվում: Ինձ համար մեծագույն երաշխիք է, որ թշնամանքը հարևան որոշ երկրների, իրենց համար ավելի ծանր բեռ է լինելու, քան մեր հանդուրժումը, քան մեզ մեկուսի թողնելը: Ավելի ստույգ ասեմ՝ թուրքերի ագրեսիվ վերաբերմունքը մեր նկատմամբ իրենց համար ավելի ծանր խնդիր է լինելու, քան մեզ համար: Ինձ թվում է՝ մեր գործունը նրանք չպիտի չափազանցեն, չպիտի անտեսեն, չպիտի փոքրացած տեսնեն, իրենց ագրեսիայի մեջ չպիտի մտածեն, որ ահա այս թումբը իրենց դեպի արևելք լայն ճանապարհի առաջ կվերացնի: Մենք պարտավոր ենք մեզ պահել գոնե այնպես, որ մեր արգելք լինելու հետ հաշվի նստեն: Մնացածը դժվարություններ են, որ անցողիկ են: Միայն այդ ժամանակ մենք առաջընթացի մեջ գործընկերներ կունենանք: Իսկ մյուս դեպքում մենք խոցի կվերաճենք և իրենց մարմնի վրա, և աշխարհի մարմնի վրա: Շատ ցավալի է էդ խոց բառը, որովհետև կուզենայի, որ իմ աղջիկը, իմ տղան, իմ թոռը

առանց ազգային բարդությունների, առանց խոց լինելու՝ աշխարհի մեջ ազատ քաղաքացիներ լինեին հավասարների շքերթի մեջ: Մենք կոչված ենք սկզբունք ունենալ ինքնությունը, հզորների մեջ աննշմար չենք, շատ փոքրերի մեջ էլ չենք, աշխարհը լիքը մեզ-նից մանր, շատ խնդիրներով, անհետացման եզրին գտնվող ժողովուրդներ կան, մեր իրավունքները չենք չափազանցում, չենք ուռչում եզան չափ առնել ուզող գորտի պես: Կյանք: Եվ գորանալու ենք: Տեւը մեր արյան մեջ է: